ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՑ ՀՈՒՆԻՍԻ 26-Ը
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /Ք. ԼԱՆԺՈՈՒ/ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**
   Անի Մկրտչյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (քաղաք Լանժոու), 2024 թվականի հունիսի 13-ից հունիսի 26-ը

3. **Հրավիրող կողմը՝**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն

4. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն «Զարգացող երկրների համար ֆոտովոլտային նախագծերի միջոցով աղքատության հաղթահարման քաղաքականություն և պրակտիկա» թեմայով բազմակողմ դասընթացին:

5. **Քննարկված թեմաները՝**
   Գործուղման ընթացքում քննարկվել են «Զարգացող երկրների համար ֆոտովոլտային նախագծերի միջոցով աղքատության հաղթահարման քաղաքականություն և պրակտիկա» թեմայով բազմակողմ դասընթացի շրջանակներում էներգետիկայի բնագավառում ֆոտովոլտային նախագծերի ներկա մակարդակը, այդ ուղղությամբ Չինաստանի ձեռքբերումները և հնարավոր զարգացման ուղիները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**
   Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ նվիրված Չինաստանի մշակույթին, արևային էներգետիկայի ոլորտի նվաճումներին, զարգացմանը և մարտահրավերներին: Կազմակերպվել են տեխնիկական այցեր Դոնհուան (Dunhuang), Ջիքուան (Jiuquan), Ջիագուան (Jiayuguan) և Յուժոնգ (Yuzhong) քաղաքների կազմակերպություններ և ձեռնարկություններ, արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայաններ, ինչպես նաև արևային էներգետիկայի ոլորտին առնչվող գործարաններ: Դասընթացները անց են կացվել «Gansu Natural Energy Research Institute»-ում, որը համարվում է Չինաստանի առաջատար գիտահետազոտական կենտրոններից մեկը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Սեմինարի ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ (կցվում են):

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ ապահովելու սույն դասընթացի շարունակականությունը:

Սեմինարի ավարտին հայկական կողմը հանդես է եկել եզրափակիչ ելույթով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Անի Մկրտչյան

02 հուլիս 2024թ.